

Ս. ԾՆՆՂԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԷՋ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առթիւ, Շաբաթ, 7 Յունուար 2006-ին, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցին կազմակերպած էր միօրեայ սեմինար մը, որ տեղի ունեցաւ մասնակցութեամբ Կիրակնօրեայ վարժարանի ուսուցիչներուն:

Յայտագիրը սկսաւ առաւօտեան ժամերգութեամբ, որմէ ետք ներկայացուցան երեք տարբեր դասախօսութիւններ: Առաջին դասախօսն էր Զրիստոնեական դաստիարակութեան, Կիրակնօրեայ վարժարանի եւ Երիտասարդականի վարիչՏիար Ծորճ Պաղտասարեան: Ան ներկայացուց Ս. Մկրտութեան խորհուրդին իմաստը: Երկրորդ դասախօսն էր Բրշ. Ծորճ աւագ սարկաւագ ԼԵյլԷկեան, որ խօսեցաւ Ս. Մկրտութեան խորհուրդի արարողութեան ու շարականներուն մանրամասնութիւններուն մասին: Վերջին դասախօսութիւնը ներկայացուց Զրիստոնեական դաստիարակութեան խորհուրդի ատենապետ Թետ Այզըքս, սիրօ ունենալով Մկրտութիւնը իբր մնայուն խորհուրդ մարդոց կեանքին մէջ:

Այս սեմինարը կազմակերպուած էր այն նպատակով, որ ուսուցիչները, ինչ որ ստացան դասախօսութիւններէն, աւելիով փոխանցեն իրենց աշակերտներուն:

SUNDAY SCHOOL TEACHERS SEMINAR IN FRESNO

On Saturday January 7, 2006 a one-day seminar took place at Holy Trinity Armenian Apostolic Church in Fresno on the occasion of Christmas and Epiphany and with the participation of the Sunday School staff.

The program opened with morning prayers and was followed by three lectures. The first speaker was George Baghdassarian, director of Christian Education, Sunday School, and the Youth group, who spoke about the meaning of the sacrament of Baptism. The next speaker was Deacon George Leylegian who presented the details of the Baptism service and hymns. The final lecture was presented by Christian Education Chairman Ted Isaacs, on the subject of Baptism as the enduring message in our lives.

This seminar was organized with the hopes that the teachers would convey to their students the messages presented to them.